Ինտեգրման խաչմերուկնե-
ռում. Հայաստանի ընտ-
ությունը

Համառոտագիր

Մարդկային
զարգացման
միջազգային
կենտրոն

Դեպի Արևմուտք. Եվրամիությանն ինտեգրվելու Հայաստանի ձգտումը

Եվրաինտեգրումը մշտապես եղել է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական գերակայություն: Անկախության առաջին տարիներից Հայաստանը որդեգրել է եվրոպական չափանիշների ուղին՝ իրականացնելով մի շարք բարեփոխումներ՝ ուղղված շուկայական տնտեսության, արդյունավետ կառավարման, ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության ամրապնդմանը: ՀՀ իշխանությունները գիտակցում են, որ Եվրոպայի հետ սերտ առևտրական հարաբերությունների հաստատումը խիստ շահավետ է երկրի տնտեսության զարգացման համար: Թեև Հայաստանն ընդհանուր սահման չունի ԵՄ-ի հետ և շրջափակված է իր երկու հարևանների կողմից, Հայաստանից արտահանվող ապրանքների առյուծի բաժինը արտահանվում է դեպի ԵՄ՝ ընդգծելով եվրաինտեգրման շոշափելի տնտեսական շարժառիթները: Հատկանշական է, որ ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի, ինչպես նաև Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) ստեղծման շուրջ բանակցություններն ընկած են Եվրամիություն-Հայաստան համագործակցության սրտում: ԽՀԱԱԳ-ի շրջանակներում ԵՄ-ն կարող է ոչ միայն ծավալուն աջակցություն տրամադրել Հայաստանին, այլև բարձրացնել միջազգային ներդրողների հետաքրքրությունը Հայաստանի հանդեպ: Ավելին, Եվրամիության հետ համաձայնագիրը կարող է նպաստել Թուրքիայի կողմից ՀՀ ապաշրջափակման գործընթացին, քանի որ փակ սահմանները հակասում են ԵՄ սկզբունքներին և միջազգային առևտրի շահերին: Նման պնդումն ավելի համոզիչ է դառնում, երբ հաշվի ենք առնում, որ Թուրքիան (ինչպես նաև եվրոպական մի շարք գաճաճ-պետություններ), չլինելով Եվրամիության անդամ, անդամակցում է ԵՄ - Մաքսային միությանը (բացառությամբ գյուղատնտեսական ապրանքների): Միաժամանակ, Մաքսային միության անդամները պարտավոր են կիրառել ընդհանուր արտաքին սակագին միության տարածք մտնող բոլոր ապրանքների, մասնավորապես, Հայաստանից Թուրքիա մտնող ապրանքների համար:

Ընդհանուր առմամբ, Եվրաինտեգրումը էականորեն դրական ազդեցություն կունենա Հայաստանի զարգացման համար: Սակայն, այն կարճաժամկետ գործընթաց չէ, քանզի հանրապետությունը պարտավոր է հաղթահարել տնտեսական և քաղաքական բազմաթիվ մարտահրավերներ միջնաժամկետ հատվածում:

Հայաստանն ու Եվրասիական Միությունը

Նախկին ԽՍՀՄ պետությունների, մասնավորապես, Ռուսաստանի հետ սերտ համագործակցությունը նպաստում է ՀՀ պետական անվտանգության ու տարածաշրջանային կայունության ամրապնդմանը և նույնպես Հայաստանի գերակայություններից է: Հայաստանցիների զգալի հատվածը Ռուսաստանին համարում է բարեկամ պետություն և հակված է ՌԴ-ի հետ ավելի սերտ հարաբերությունների հաստատմանը: Շրջանառվող տեսակետներից մեկի համաձայն, ստեղծվելիք Եվրասիական Միությունը, որի գաղափարն առաջ է քաշվել ՌԴ-ի կողմից և աջակցություն ստացել Բելառուսից ու Ղազախստանից, կարող է ծառայել որպես արդյունավետ հարթակ Հայաստանի՝ եվրասիական ինտեգրման գործընթացում: Կարծիք կա նաև, թե Հայաստանի համար առավել բարեբեր կարող է լինել ոչ թե Եվրաինտեգրման, այլ Եվրասիական ինտեգրման ուղին: Այս տեսակետի կողմնակիցներն առաջ են քաշում այն փաստարկը, որ Հայաստանում արտադրվող բազմաթիվ ապրանքներ մրցունակ չեն ԵՄ շուկայում, մինչդեռ ավելի լավ կվաճառվեն Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) շուկաներում: Հայաստանի հնարավոր անդամակցությունը Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի Մաքսային միությանը դիտարկվում է նաև վերոհիշյալ համատեքստում:

Միաժամանակ, անհերքելի են Հայաստանի՝ Եվրասիական Միությանն անդամագրվելուն խոչընդոտող մի շարք լրջագույն մարտահրավերներ: Այսպես, Մաքսային միության անդամ Ղազախստանը պնդում է, որ ՀՀ-ն միանա Միությանը առանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ): Քաղաքական հետևանքներից զատ, նման մոտեցումը ենթադրում է նաև մաքսային հսկողության հաստատում Հայաստանի և ԼՂՀ-ի միջև, ինչն անընդունելի է Հայաստանի համար: Ռուսաստանի Դաշնությունը, իհարկե, ցանկանում է տեսնել Հայաստանը Եվրասիական միությունում և դրա Մաքսային միությունում, սակայն չի կամենում կորցնել Ղազախստանը ի շահ Հայաստանի: Ի տարբերություն Մաքսային միությանը, ԵՄ-ն չի պահանջում սահմաններ գծել ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև: Բացի այդ, կարծիք կա, որ Եվրասիական միության անդամ-երկրներում (Ռուսաստանում, Ղազախստանում և Բելառուսում) ավտորիտար ռեժիմներ են իշխում, ուստի այդ միությանն ինտեգրվելը կարող է հանգեցնել նմանատիպ ռեժիմի հաստատմանը նաև Հայաստանում: Մինչդեռ, Եվրամիությունը դիտվում է որպես Հայաստանի լավագույն գործընկերը ժողովրդավարության և արդյունավետ կառավարման

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

հաստատման գործում: Հատկանշական է, որ Հայաստանը ընդհանուր սահման չունի նաև Մաքսային միության հետ:

Ընտրությունը Եվրամիության և Եվրասիական Միության միջև

Հայաստանի քաղաքական վերնախավը փորձում է հասնել առևտրի համաձայնության միաժամանակ թե՛ ԵՄ-ի, թե՛ Մաքսային միության հետ՝ հայտարարելով, որ ինտեգրումը ԵՄ-ին, ԱՊՀ-ին և Եվրասիական միությանը չպետք է դիտվեն որպես միմյանց բացառող գործընթացներ: Մինչդեռ 2012թ.-ին Հայաստանը վավերացրել է ԱՊՀ ազատ առևտրի գոտու վերաբերյալ պայմանագիրը, և ցանկանում է նաև նախաստորագրել Ասոցացման համաձայնագիր ԵՄ-ի հետ: Սակայն, գործընկերները մարտահրավերներ են նետում հայաստանյան քաղաքական էլիտայի նման մոտեցմանը. 2012թ.-ի դեկտեմբերին Եվրոպական միության Արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն հանձնակատարի խոսնակը նախազգուշացրեց. «եթե Հայաստանը միանա որևիցե մաքսային միության, այդ հանգամանքը համատեղելի չի լինի ԵՄ-ի հետ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման շուրջ երկկողմ պայմանագրի կնքման հետ: Բանն այն է, որ մաքսային միությունը ունի արտաքին առևտրի մեկ միասնական քաղաքականություն, իսկ առանձին անդամ պետությունն այլևս չի կրում սուվերեն իշխանություն իր արտաքին առևտրի քաղաքականության նկատմամբ»:

Չնայած այս հստակ հայտարարությանը, ակտիվորեն քննարկվում է հետևյալ հարցը. արդյո՞ք Եվրաինտեգրումը և Հայաստանի անդամակցությունը Եվրասիական միությանը միմյանց հակասող գործընթացներ են, թե կարող են իրականացվել զուգահեռաբար: ԵՄ ընդլայնման և Եվրոպական Հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն պնդում է, որ ԵՄ-ն նախապայմաններ չի դնում իր գործընկերների առջև, և առաջիկա պայմանագրերը չեն վնասի Հայաստանի և նրա գործընկեր - Ռուսաստանի միջև առկա սերտ հարաբերություններին, որոնք այդքան կարևոր են ՀՀ-ի պետական անվտանգության տեսանկյունից: Որքան Հայաստանը առաջ է շարժվում Եվրաինտեգրաման գործընթացում, այնքան ավելի հավասարակշռված և մեղմ են դառնում եվրոպական ամբիոններից արվող հայտարարությունները: Միաժամանակ, շարունակաբար փորձելով հարկադրել Հայաստանին անդամակցելու Մաքսային միությանը՝ Ռուսաստանը հեռացնում է ՀՀ-ին Հյուսիս-Արևելք առանցքից: Վերջին իրադարձությունները, այդ թվում՝ ՌԴ-ի և Ադրբեջանի միջև կայացած համաձայնությունը սպառազինության վաճառքի շուրջ, Ռուսաստանին պատկանող ընկերությունների կողմից գազի և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացումը, հայ աշխատանքային միգրանտների հանդեպ ստորացուցիչ վերաբերմունքը և ռուսաստանյան ՁԼՄ-ների կողմից բարձրաձայնվող ազգային պատկանելիության վրա հիմնված խտրականությունը, ապացուցում են, որ Ռուսաստանը ձախողել է տարածաշրջանային ինտեգրման գրավիչ միջավայրի ձևավորման գործընթացը և շարունակում է հիմնականում հույսը դնել առավելապես «մտրակի» քաղաքականության վրա: Նման մոտեցումը կարող է հարկադրել Հայաստանին անվտանգության երաշխիքների այլընտրանքային ուղիներ փնտրել: Ճիշտ այնպես, ինչպես աշխարհի կորած անկյունում փակ սահմաններից այն կողմ հնարավոր բոլոր մարտահրավերներին դիմակայելու պարտադրված Հայաստանը վարվեց տնտեսական գոյատևման և զարգացման խնդիրներում:

Համառոտագիրը մշակվել է 2013թ-ի հունիսի 25-ին կայացած՝ «ԵՄ և ԵԱՄ. Հայաստանը տարածաշրջանային համատեքստում» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր «Սևծովյան տարածաշրջանի խաղաղաշինական ցանցի» աջակցությամբ: